

**Կենդանու ախտաբանաանատոմիական դիախերձման  
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

**Կենդանու տեսակ.** Սև անգղ:

**Կենդանու գրանցման համար.** 02

**Կենդանու պատկանելիություն.** Երևանի կենդանաբանական այգի:

**Դիախերձման ժամ և վայր.** “Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն” ՊՈԱԿ-ի մոլեկուլային մակաբուժաբանության լաբորատորիա, 2022թ.-ի հունվարի 13-ին:

**Դիախերձում իրականացնող.** Կ.գ.թ., ավագ գիտաշխատող Օ.Վ. Շչերբակով:

**Անամնեստիկ տյալներ.** Անգղն անկել է 2022թ. հունվարի 7-ին:

**Կլինիկական ախտորոշում.** Չկա:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

**Արտաքին զննում**

1. Սև անգղի դիակ, երիտասարդ էգ, կանոնավոր մարմնակազմության, միջինից բարձր բովանդության, պատկած է մեջքի վրա, ծալված թևերով և հետին վերջավորություններով:
2. Դիակը սառն է, արտահայտված է մկանների փայտացում:
3. Տեսանելի լորձաթաղանթները չոր են, գունատ: Բնական անցքերը առանձնահատկություններ չունեն:
4. Փետուրները՝ առանց առանձնահատկությունների:
5. Ենթամաշկային բջջանքում առանձնահատկություններ չեն նկատվում:
6. Մկանները զարգացած են նորմալ, առանց ատրոֆիայի նշանների; ոսկորներում, հողերում և կապաններում առանձնահատկություններ չեն նկատվում:

**Ներքին զննում.**

1. Մարմնի խոռոչի օրգանների անատոմիական դիրքը կանոնավոր է, խոռոչում ազատ հեղուկ չկա: Շճային ծածկույթները՝ մեծ քանակությամբ ճարպային հյուսվածքով; արյունատար անոթները զգալիորեն արյունալեցված:
2. Թոքամզի թերթիկները և օդափարկերը՝ առանց առանձնահատկությունների: Մրտապարկում և պերիկարդի խոռոչում առանձնահատկություններ չկան: Միրտը չափերով փոքր-ինչ մեծացած է, սրտամկանի գույնն ու խտաստիճանը՝ առանց առանձնահատկությունների:
3. Բերանի խոռոչի օրգանները, ըմպանը, կերակրափողը, կոկորդը և շնչափողը՝ առանց առանձնահատկությունների: Կտնառքը չի պարունակում կերազանգվածներ, լորձաթաղանթը կարմրած է, այտուցված, պատված զգալի քանակությամբ սրիտակավուն լորձով:  
Թոքերում և բրոնխներում առանձնահատկություններ չկան:

4. Փայծաղ առանձնահատկություններ չունի:

Լյարդը բալա-շագանակագույն է, հավասարաչափ գունավորված, եզրերը կլորացած են, խտաստիճանը փափկած չի:

Երիկամները աղյուսագույն են, պատկերն արտահայտված է, խտաստիճանը՝ էլաստիկ: Մկանային և գեղձային ստամոքսներում կերային զանգվածներ չկան, լորձաթաղանթը կարմրած է, այտուցված, պատված սպիտակավուն լորձով: Մակաբույծները բացակայում են:

Բարակ և հաստ աղիների լորձաթաղանթը մուգ կարմիր է, այտուցված, բազմակի կետային արյունազեղումներով: Պարունակյալը հեղուկ է, կարմրա-մոխրագույն: Մակաբույծները բացակայում են:

Կոյանքի լորձաթաղանթը մուգ կարմիր է, այտուցված:

Ձվափողի լորձաթաղանթը հաստացած է, այտուցված, կարմրավուն գույնի, պատված է սպիտակավարդագույն լորձով:

5. Գանգային խոռոչը, ուղեղային թաղանթները, գլխուղեղը, հավելյալ ծոցերը՝ առանց առանձնահատկությունների: Քթի խոռոչում առանձնահատկություններում չկան:

6. Ողնաշարում, ուղնուղեղում և ոսկրածուծում առանձնահատկություններ չկան:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

### Ախտաբանաանատոմիական ախտորոշում.

1. Այսպիսով, դիահերձման ժամանակ հայտնաբերվել են հետևյալ ախտաբանաանատոմիական փոփոխություններ.

- հեպատոմեգալիա;
- հեպատիտ;
- կատառային ինգլուվիտ;
- կատառային գաստրիտ;
- կատառահեմորագիկ էնտերոկոլիտ;
- կատառային սալպինգիտ;
- կատառային կլոագիտ:

2. Հատուկ լաբորատոր հետազոտություններ.

- Կրծքի մեծ մկանը հետազոտվել է մանրադիտակի տակ, կոմպրեսոր եղանակով: *Trichinella pseudospiralis* նեմատոդի թրթուրներ չեն հայտնաբերվել:
- Լյարդի կտոր պահվել է սառցարանում՝ հետագա քիմիաթունաբանական հետազոտություն անցկացնելու նպատակով:

3. Հայտնաբերված պատկերը առավել բնորոշ է սուր թուվանորմանը: Թոչնի բարձր բթվածությունը ու արտահայտված փոփոխությունները մարսողական խողովակում և լյարդում վկայում են շատ արագ զարգացող պրոցեսի մասին:

Հետազոտող՝



Օ.Վ. Շչերբակով

14. 01. 2022թ.

## ՀԱՎԵԼՎԱԾ



**Նկար 1. Մահացած անգղի ընդհանուր տեսքը**



**Նկար 2. Ներքին օրգանների ընդհանուր տեսքը և ճարպակալումը**



Նկար 3. Կատարահենոռագիկ էնտերիտ